ՀՀԿ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

26 օգոստոս, 2026 թվականի № 73-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի № 111-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 15-րդ կետերը և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ և 25-րդ կետերը, հիմք ընդունելով «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն) գործադիր տնօրենի 2026 թվականի օգոստոսի 24-ի N Ռ/26 01-115 գրությունը և հաշվի առնելով Ընկերության աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությունը՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Փոփոխել Հանրային հեռարձակողի խորհրդի 2025 թվականի դեկտեմբերի 26-ի № 111-Լ որոշման № 1 և № 3 հավելվածներով հաստատված՝ 2026 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2026 թվականի հոկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածի համար նախատեսված Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը և հաստիքացուցակը՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար №1 և №2 հավելվածների:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Վ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

26 օգոստոս, 2026 թվականի
ք. Երևան